ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1850-1920 թթ.)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ. Գ.

Արցախի մշակույթը հանուր հայության մշակույթի մի օղակն է, որի տեղական երանգավորմանը հատուկ են նույն օրինաչափությունները և ազգային առանձնահատկությունները: Այն սնունդ էր առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստը բերում համազգային մշակույթի գանձարանին:

Հայ ժողովրդի այս հատվածի բնակչությունը դարեր ի վեր իր քաղաքական ու մշակութային շրջահայաց գործիչների եռանդուն գործունեության շնորհիվ պատմական ամենածանր պայմաններում իսկ կարողանում էր հետ չմնալ համազգային հոգևոր կյանքի ընթացքից: Դա նկատելի է հատկապես հասարակական-քաղաքական հեղաշրջումներով համակված, լուսավորության ու ազատության գաղափարներով շնչող XIX դարում:

Նոր ժամանակներում հայոց քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին զուգընթաց՝ Արցախի ժողովուրդը, հենվելով նախնիների ստեղծած մշակութային արժեքների վրա, կերտեց ժամանակի պահանջներին համահունչ իր մշակույթը: Դրա զարգացման մեջ ներքաշվեցին հայ մտավորականության նոր, կարող ուժեր, որոնք բեղմնավոր գործունեություն ծավալեցին Հայաստանի արևելյան հատվածում՝ Արցախում՝ նպաստելով ժողովրդի հոգևոր վերակենդանացմանն ու վերափոխմանը: Դարաշրջանի կարևոր իրադարձությունները իրենց ազդեցությունն էին թողնում նաև մշակույթի զարգացման ու նրա ուղղությունների վրա և ստեղծագործելու մշտական լիցքեր հաղորդում մշակութային գործիչներին:

Արցախում ծնվել են տաղանդավոր գիտնականներ, արվեստի, գրականության, ռազմաքաղաքական, հոգևոր-մշակութային ասպարեզի ականավոր գործիչներ: Նրանք միշտ էլ միասին են պայքարել օտար զավթիչների դեմ, ղեկավարել ազգային-ազատագրական շարժումը, ստեղծել ու թողել են իրենց հարուստ ժառանգությունը մշակութային կյանքի տարբեր բնագավառներում:

Արցախի ժողովուրդը հպարտանում է Գանձասարի Հասան-Ջալալյան տոհմի հոգևոր-մշակութային ականավոր գործիչներով, որոնց հոգածության շնորհիվ պահպանվել են Գանձասարի ու Շուշիի հոգևոր, մշակութային կենտրոնները, որոնք միաժամանակ եղել են հայ ազատագրական շարժումների կենտրոններ: Նրանց գործունեության շնորհիվ երկրամասում ծավալվել է մշակութային շինարարական լայն գործունեություն, վերակառուցվել են բազմաթիվ վանքեր, հարուստ ձեռագրատուն, դպրանոց և մշակութային-լուսավորական այլ օջախներ:

Գանձասարի Հասան-Ջալալյան տոհմի հոգևոր-մշակութային գործիչների շարքում իր ուրույն տեղն ունի Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանը (1775-1854 թթ.), որի ողջ գործունեությունը սերտորեն առնչվում է քննարկվող

ժամանակաշրջանում արցախահայության կյանքում առաջացած հուզող հարցերին: Ռաֆֆին անդրադարձել է այն իրողությանը, որ երբ ռուսները տիրեցին Ղարաբաղին և Երևանյան նահանգին, էջմիածնում էր Ներսեսի նման մի եկեղեցական, իսկ Գանձասարի վանքում՝ Բաղդասար միտրոպոլիտը: Այդ երկուսն իրենց գործունեությամբ բավական նման էին միմյանց, այն զանազանությամբ միայն, որ Ներսեսն ուներ քաղաքական իդեալներ, իսկ Բաղդասարը՝ եկեղեցական և վանքային բարեկարգության եռանդ[1]:

Միտրոպոլիտի գործունեության շրջանն ազգային վերածնության (Ռուսաստանին միանալուց հետո) նորաբողբոջ գաղափարների և հին մտայնության դեմ պայքարի մի ժամանակաշրջան էր, երբ գրողը, գիտնականն ու հասարակական, քաղաքական հոգևոր գործիչը հաճախ էին միանում մեկ անձնավորության մեջ: Այդ շրջանը լուսավորական, մշակութային շարժման աշխուժացման տարիներ էին Արցախում: Ազգը կրթելու, տնտեսական բարգավաճմանը հասնելու և ազգամիավորման ձգտումները հետզհետե հստակ ձևեր ստացան:

Լեոն Ղարաբաղի (Արցախի) հոգևոր թեմական դպրոցին նվիրված իր աշխատության մեջ գրում է. «Ահա այս ժամանակից է, որ Բաղդասար միտրոպոլիտը սկսում է իր մշակութային, լուսավորական եռանդուն գործունեությամբ հռչակ և ընդարձակ ժողովրդականություն ստանալ: Միտրոպոլիտի շինարար ջանքերը երբեք չեն ընդհատվում և նրանք մեծագույն մասամբ նուիրված են Գանձասարի վանքին, որ մի տեսակ նուիրական պաշտամունք էր նրա համար, մանավանդ շատ էր աշխատում, որ Հասան-Ջալալեանների հռչակավոր վանքը դառնա մտավոր գործունեության և դաստիարակութեան կենտրոն»[2]:

Բաղդասար միտրոպոլիտի կենսագրության նշանակալից մասն է կազմում ոչ միայն եկեղեցական-շինարարական գործունեությունը, այլև ակնառու ջանքերը մշակութալուսավորական հիմնարկներ հիմնելու, դրպրոցաշինության ու տպագրական գործի ասպարեզում: 1837թ. հուլիսի 1-ին կայսերական հրամանով (Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի հորդորմամբ) նշանակվելով Արցախի թեմի առաջնորդ և նույն թեմի կոնսիստորիայի նախագահ՝ նա իր շուրջն է համախմբում հայտնի լուսավորիչներ, եկեղեցական գործիչներ Պողոս վարդապետ Ղարաբաղցուն, Տեր-Հովհաննիսյանին, Ավետիք Տեր-Սարգսյանին, Առաքել Յուզբաշյանին և ուրիշների, հորդորում նրանց իրականացնել լուսավորական մի շարք ձեռնարկումներ: Այսպես, թեմի առաջնորդի մշակութալուսավորական առաջին գործերից մեկը եղավ հրատարակչական գործի բարենորոգումը: Իր միջոցներով նա գնում է Շվեյցարիայի Բազել քաղաքի միսիոներների (որոնք 7-8 տարի լուսավորական գործունեություն են ծավալել Շուշիում) տպարան՝ բոլոր սարքավորումներով: Այն անվանվում է «Տպարան վիճակավոր առաջնորդին Ղարաբաղու ու բարձր սրբազան միտրոպոլիտին Բաղդասարի»[3]: Տպարանը գործում էր կանոնավոր, հարստանում Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանից բերված տառա-

---

[1] **Ռաֆֆի**, Երկեր, Ե., հ. 10, էջ 452:

[2] **Լեո**, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 114-115:

[3] **Ավագյան Ս.**, Ղարաբաղի մամուլի պատմություն, Ե., 1989, էջ 31-32:

տեսակներով և տպագրական պարագաներով: Բավական մեծ գումար հատկացնելով Մխիթարյանների վանքին՝ միտրոպոլիտը բերել տվեց մեկական օրինակ նրանց բոլոր հրատարակություններից, և հոգևոր դպրոցին կից ստեղծվեց հարուստ գրադարան՝ այնտեղ հավաքելով նաև Արցախի վանքերում գտնված նշանավոր գրչագիր մատյանները: Նա այդ գրքերն իր սեփական տպարանում տպագրելու մտադրություն ուներ: Տպագրած գրքերի թվում էր Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի», Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոյ աշխարհին Աղուանից», Խաչատուր Տեր-Օհանյանի «Համառօտ Հայկազեան քերականութիւն» և այլ գրքեր: Նա լուրջ ուշադրություն էր դարձնում վանքերի և եկեղեցիների մոտ գտնվող դպրոցների վրա, բոլոր միջոցներով օգնում ուսումնարանների բարելավմանը, նորերի բացմանը, ձգտում էր աղքատ խավի երեխաներին ազատել ուսման վարձից և դպրոցների նյութական միջոցները հիմնականում ապահովել եկեղեցիների ու վանքերի օգտին կատարված հանգանակությունների և նվիրատվությունների միջոցով:

Բաղդասար միտրոպոլիտի ծառայությունը գնահատելի է հատկապես այն առումով, որ նա իր միջոցներով հիմնադրեց Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը (1838 թ. հունիսի 22-ին): Այն պահպանեց իր գոյությունը մինչև 1920 թ.:

Ազգային լուսավորության քարոզիչը մեծ նշանակություն էր տալիս կնոջը կրթելուն և նրան հասարակական ակտիվ գործունեության մղելուն: 1852 թ. ապրիլի 18-ին Շուշիի կոնսիստորիայի խորհրդի նիստում Բաղդասար միտրոպոլիտը՝ առաջարկում է Շուշիում բացել օրիորդաց դպրոց, քանի որ կինն ավելի շատ է շփվում երեխաների հետ, և դրա համար էլ նրա ազդեցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ:

Բաղդասար միտրոպոլիտի գործունեության շրջանում Արցախում մշակութային կյանքի ամենանշանակալից երևույթներից մեկն էր խաչքարեր կանգնեցնելու ավանդույթի վերականգնումը և արվեստի այդ նշանավոր բնագավառի պատմական զարգացման ընթացքը նոր ժամանակներում իր հունի մեջ դնելը: Նա շինարարական լայնածավալ աշխատանքներ է կատարում: Շուշիի բերդաքաղաքում նա 1851 թ. կառուցեց հոյակապ առաջնորդարան: Սեփական միջոցներով 1853 թ. գնեց մի ընդարձակ հողամաս՝ իր հիմնադրած թեմական դպրոցի համար առանձին շենք կառուցելու համար, սակայն վաղաժամ մահը (1854 թ.) նրա ձեռնարկումը թողեց անկատար: Հոգևոր գործիչն իր գործունեության բազմազանությամբ Արցախի մշակույթի հետագա առաջընթացի նախադրյալներ ստեղծեց:

Քննվող ժամանակաշրջանում Արցախի հոգևոր մշակութային կյանքում որոշակի առաջընթաց էր նկատվում Բաղդասար միտրոպոլիտի ազգական, խոշոր մշակութային գործիչ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի (1802-1885 թթ.) բեղուն գործունեության շրջանում: Ուսումնական գործի ջատագով Սարգիս Ջալալյանցն իր տնօրինության տակ է վերցնում տպագրական-հրատարակչական գործը և Շուշիի հոգևոր հայրերի տպարանը, շարունակում է տպագրել ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, գիտական աշխատություններ, դպրոցական կանոնա-

դրություններ, պարբերականներ: Արցախում ազգային լուսավորության գործի զարգացմանը նպաստեց Սարգիս արքեպիսկոպոսի և հայ մտավորական գործիչների նախաձեռնությամբ 1859 թ. Շուշիում հիմնադրված ընկերությունը, որը բացեց ընթերցարան և գրադարան: Ընկերությունը ստանում ու տարածում էր ռուսական և եվրոպական գրականություն: Ամեն տարի գրադարան-ընթերցարանի կառավարման հանձնաժողով էր ընտրվում: Ընկերությունն իր անդամներից վճարներ էր ստանում: Այն կոչվում էր «Թանգարան վերածնության», որը նմանվում է Կ. Պոլսում 1850 թ. բացված «Վերծանության թանգարան», «Եղբայրական մեսրոպյան հիմնարկությանը»[4]: Այս գործում նշանակալից գործ կատարեցին Արցախի մշակույթի հայտնի գործիչներ Պ. Աստվածատրյանը, Պ. Բաբայանը, Ա. Բահաթրյանցը, որոնք հայերեն և ռուսերեն բազմաթիվ գրքեր նվիրեցին ընթերցարանին: Հասարակությունը նյութական միջոցներ է տրամադրում գրադարանին: Շուշիում հաստատված մատենադարանը կոչվում էր «Հասարակաց մատենադարան Շուշու հայոց»[5]: Կյանքի պահանջներին համընթաց՝ ժողովրդի մեջ բորբոքվում էր հետաքրքրությունը դեպի ազգային-լուսավորական գործը:

Սարգիս Ջալալյանցը նպաստել է նաև Շուշիում թատերական կյանքի աշխուժացմանը: Ճիշտ է, մշտական պրոֆեսիոնալ թատրոն դեռ չկար, բայց նրա հորդորներով թատերասեր երիտասարդները հաճախակի ներկայացումներ էին տալիս թեմական, օրիորդաց դպրոցներում, ինչպես նաև գյուղերում: Արցախահայ հասարակական կյանքում անընդհատ աճում էր թատրոնի, երաժշտության ազդեցությունը: Հավաստի աղբյուրների համաձայն՝ 1860-ական թվականներին Շուշիում առաջին անգամ հանդես են գալիս մշտական թատերախմբեր, հաճախակի են դառնում արևելահայ դերասանների հյուրախաղերը: Ազգագրագետ Ե. Լալայանը հիշատակում է, որ Շուշիում առաջին հայկական ներկայացումը տեղի է ունեցել դեռ 1860-ական թվականներին, երբ հայրենիք վերադարձած ուսանողները թեմական դպրոցի ուսուցիչների և շրջիկ դերասանների հետ ներկայացումներ են տվել[6]: Այս վկայությունն իր հիշողություններում հաստատում է հայ թատերական արվեստի ներկայացուցիչներից մեկը՝ Գ. Չմշկյանը, որը 1865թ. հունիսին Ս. Մանդինյանի և Մ. Ամերիկյանի հետ եղել է Շուշիում ու տվել մի քանի ներկայացումներ («Սամվել», «Վարդան Մամիկոնյան» և այլն) [7]:

Գնահատանքի արժանի է Սարգիս արքեպիսկոպոսի ջանքերով թեմական դպրոցի շենքի կառուցումը, որի բացման արարողությունը տեղի ունեցավ 1872 թ. հունիսի 22-ին (դպրոցը հիմնադրվել է ավելի վաղ՝ 1838-ին): Այս բազմաշխատ գործիչն իր ամբողջ կյանքը նվիրեց Արցախի մշակույթի զարգացմանը: Նրա մահից հետո Հասան-Ջալալյանների տոհմը այլևս նշանավոր եկեղեցական գործիչներ չտվեց:

---

[4] **Լեո,** Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում, Թիֆլիս, 1911, էջ 11:

[5] Կռունկ հայոց աշխարհի, 1860, N 2, էջ 148:

[6] Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1897, թ. 11, Բ գիրք, էջ 106:

[7] **Գևորգ Չմշկյան**, Իմ հիշատակարանը, Ե., 1953, էջ 47-57:

Քննվող ժամանակաշրջանում Արցախի մշակույթի պատմության աչքի ընկնող դեմքերից է հասարակական գործիչ, հրապարակախոս, գրող, շուշեցի հայտնի բարերար Հ. Առաքելյանը (1855-1918 թթ.): Նա մի շարք նախաձեռնությունների հեղինակ էր: Արցախահայ մամուլի սկզբնավորման համար մի որոշ չափով հող նախապատրաստեցին Հ. Առաքելյանի գործունեությունն ու փորձը: Նա աջակցում էր հայ մշակույթի ականավոր գործիչ, Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Խորեն Ստեփանեին, որը Թիֆլիսից բերում է տպագրական սարքավորումներ և Շուշիի հոգևոր հայրերի տպարանում հրատարակում «Հայկական աշխարհ» գրական-մանկավարժական ամսագիրը: Դրա խմբագրության անդամներն էին Խորեն Ստեփանեն (խմբագիր), Հ. Առաքելյանը, Հ. Քուչուբեկյանը, իսկ առավել աչքի ընկնող հոդվածագիրները մեր մամուլի ականավոր մշակներն էին՝ Գ. Արծրունին, Ներսիսյան դպրոցի հոգաբարձու Գ. Իզմիրյանը և ուրիշներ:

Ուշագրավ հանգամանքներից մեկն էլ այն էր, որ Հ. Առաքելյանը առաջին անգամ հանձն առավ հիմնադրելու Կովկասի հայոց բարեգործական ընկերության առաջին մասնաճյուղը Շուշիում (1881 թ.), որի վարչության նախագահը, գանձապահն ու քարտուղարը Լեոն էր: Շուշիի մասնաճյուղի տնօրինած միջոցները ծախսվում էին դպրոցների բարեկարգման ու գրադարան-ընթերցարան հիմնադրելու նպատակներին, ինչպես նաև տառապյալներին և չքավոր աշակերտներին օգնելուն[8]: Որոշվեց դպրոցի համար նյութական միջոցներ հանգանակել, որը բավական արդյունավետ եղավ[9]:

Հ. Առաքելյանի ձեռնարկումներից էր նաև նոր պարբերականի հրատարակմանը բավական նյութական միջոցներ տրամադրելը: 1881 թ. Շուշիում Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս տեսավ Ն. Տեր-Ավետիսյանի «Քնար խոսնակ» գրական ժողովածուն: Ինքնատիպ այդ հրատարակության մեջ զետեղվում են ինքնուրույն և թարգմանական գործեր՝ ռուս և եվրոպական դասականներից: Սա պատահական երևույթ չէր. ժողովածուի հեղինակը, նրա խմբագրական մարմնի անդամները (Հ. Առաքելյան, Ալ. Քալանթար, Մ. Առուստամյան), լինելով կրթված ու զարգացած անձնավորություններ, գործերը ընտրելիս առաջին հերթին հաշվի են առնում դրանց գաղափարական բովանդակությունը, քաղաքական մաստը: Նշենք, որ նրանք նոր դեմք չէին գրական աշխարհում: Հ. Առաքելյանի գրչին են պատկանում «Հանրամատչելի մեսրոպյան գրադարան», «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը», «Հանրագիտական բառարանը» և այլ հրապարակումներ:

Հ. Առաքելյանի մշակութային, լուսավորական, հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալվում է հատկապես XX դ. առաջին տասնամյակներին: Բնակություն հաստատելով Թիֆլիսում՝ նա վարում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության քարտուղարի, այնուհետև ազգային հոգաբարձության խորհրդի նախագահի պաշտոնը (1900-1906 թթ.), ընտրվում է I (1906 թ.) և II (1907թ.) պետական դումաների անդամ, 1908-ից՝ «Մշակ» թերթի խմբագիր, 1913 թ.՝ «Արոր»

[8] Տեղեկագիր, 1894, էջ 77:
[9] Մշակ, 1883, N 163:

ամսագրի խմբագիր, 1915 թ.-ից ստեղծում ու գլխավորում է հայ գաղթականներին օգնող հանձնաժողովը, հիմնադրում է նաև «Հայ ազգաբնակչության մեջ գրագիտության տարածելու ընկերությունը»:

Արցախի մշակութային կյանքի զարգացման հաստատումն էին Հ. Առաքելյանի և հայ մտավորականության կարող ուժերի նախաձեռնությամբ կազմակերպված հայ գրերի 1500 և հայ տպագրության 400-ամյակների տոնակատարությունները, որոնք 1912 թ. նշվեցին Արցախի մշակութային կենտրոն Շուշիում և նրա գավառներում: Աներկբա է, որ Հ. Առաքելյանը անգնահատելի ծառայություն մատուցեց Արցախի մշակույթի զարգացմանը:

XIX դ. դարի երկրորդ կեսի Արցախի մշակույթի երախտավորների շարքում իր բացառիկ տեղն ուներ գրականագետ, թարգմանիչ-մանկավարժ Սիմեոն Հախումյանը (1859-1918 թթ.): Նա ծնվել է Շուշի քաղաքում, աշակերտել է հայտնի մանկավարժ Պետրոս Շանշյանին, ավարտել է տեղի թեմական դպրոցը, այնուհետև սովորել է (1875-1878 թթ.) Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Բավարարվելով միջնակարգ կրթությամբ՝ նա խորամուխ է եղել առանձին գիտություններին մեջ, հարուստ գիտելիքներ ձեռք բերել մասնավորապես հայկական, ռուսական և արտասահմանյան գրականությունների գծով, տիրապետել է մի քանի լեզուների:

Բարձրագույն կրթությունը ստանալով Փարիզի Սորբոնի համալսարանում՝ Ս. Հախումյանն իր գործունեությունը սկզբում ծավալել է մանկավարժության ասպարեզում: Նա 1879 թ. եղել է Կարսի հայկական դպրոցի ուսուցիչն ու տեսուչը, իսկ 1880-1882 թթ. հայրենի Շուշի քաղաքի թեմական, օրիորդաց դպրոցներում ու ռեալական ուսումնարանում դասավանդել է հայոց և ռուսաց լեզուներ[10]: Նա ձգտում էր դպրոցներում բարելավել մայրենի լեզվի ուսուցումը, հատկապես ռեալական ուսումնարանում, վերականգնել և զարգացնել ազգային ավանդույթները, ճանապարհ հարթել դպրոցի ժողովրդականացման համար:

Ս. Հախումյանը Շուշիի թեմական դպրոցում աշխատելու տարիներին լուրջ աշխատանք կատարեց դպրոցական ծրագրերը բարելավելու և միասնական դարձնելու, կրթական համակարգում հաջորդականություն մտցնելու, ինչպես նաև մանկավարժական առաջավոր մեթոդների կիրառության և ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման ասպարեզում: Նրա նախաձեռնությամբ Շուշիում ձևավորվում ու զարգանում է գրադարանային գործը: Գանձասարի, Դադի, Գտչա վանքերի, ինչպես նաև Էջմիածնից, հայկական գաղթօջախներից հավաքվում են ձեռագիր մատյաններ, հայերեն և օտար լեզուներով հայագիտական հազարավոր գրքեր և պարբերական մամուլի («Հյուսիսափայլ», «Արարատ», «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Կռունկ Հայոց աշխարհի», «Դաստիարակ», «Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Փորձ», «Արձագանք», «Դպրոց» և այլն) հարուստ հավաքածուներ: Ուշագրավ էր նաև այն, որ հայրենասեր գործիչը թեմական դպրոցում կազմակերպում է «Ընթերցասիրաց թանգարանային ընկերություն»: Գրադարանների ստեղծման ու հարստացման

[10] Նույն տեղում, 1886, N 56:

գործում Արցախում զգալի ներդրում կատարեցին նաև Մոսկվայի, Թիֆլիսի, Երևանի, Բաքվի, Շուշիի և հայկական այլ գաղթօջախների մի շարք բարեգործական-լուսավորական ընկերություններ:

Բեղմնավոր մանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեությանը զուգընթաց՝ Ս. Հախումյանը զբաղվում է նաև պարբերական մամուլի հրատարակման գործով: Դեռ ուսանողական տարիներին ակտիվորեն աշխատակցում էր «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Արարատ» և այլ պարբերականներին: Հաճախ թղթակցել է նաև ռուսական մամուլի տարբեր օրգանների: Նա փափագում էր ունենալ տպագիր օրգան և դրա միջոցով հաղորդակցվել ժողովրդի հետ: Այդ նպատակով 1881 թ. փետրվարին Ս. Հախումյանը Կովկասի փոխարքայությունից սեփական ամսագրի լույսընծայման թույլտվություն է խնդրում: Գրաքննչական մարմինները չեն առարկում ամսագիր հրատարակելու վերաբերյալ նրա ներկայացրած ծրագրին, և նույն թվականի նոյեմբերի 27-ին նրան թույլատրվում է հիմնելու «Գործը»: Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությունն այս որոշումը ընդունում է պայմանով, որ ամսագրի բոլոր նյութերը ենթարկվեն խիստ գրաքննության:

Պարբերականի ծրագրի նախագիծը լույս է տեսնում «Մշակի» 1881 թ. դեկտեմբերին՝ մի քանի համարներում[11]: «Գործի» անդրանիկ համարի (1882 թ. մարտին լույս է տեսնում 13 էջանոց մի տետր՝ «Գործ» անունով) մասին փոքրիկ հաղորդագրություն է տպագրվում «Մշակի» 1882 թ. N 84-ում: Այնտեղ նշվում է, որ «Գործ» հանդեսում լուսաբանվում են տեղական, անդրկովկասյան և արտասահմանյան կյանքը, քաղաքական ներքին տեսությունները, գիտական, մանկավարժական և բարոյախոսական նյութեր, գրախոսություններ, թարգմանական ստեղծագործություններ, մշակութային կյանքին վերաբերող այլ նյութեր[12]: «Գործ» հանդեսի հեղինակությունը բարձրացնում էին ոչ միայն խմբագիր-հրատարակիչը, այլև նրա շուրջը համախմբված Հ. Առաքելյանը, Մ. Առուստամյանը, Ն. Տեր-Ավետիքյանը, Օ. Տեր-Մովսիսյանը և ուրիշներ:

«Գործն» իր շուրջ համախմբեց ժամանակի առաջադեմ հայ գործիչներին, լուսավորական-գաղափարական աշխատանք էին կատարում արցախահայության հասարակական-քաղաքական կյանքում: Ուշագրավ էր այն, որ մամուլի զարգացման այս շրջանում (1870-1880-ական թթ.) Արցախում ավելի որոշակի է դառնում նրա քաղաքական ուղղվածությունը: Մամուլն ավելի հարուստ բովանդակություն է ձեռք բերում, մերձենում կյանքի հրատապ խնդիրներին:

Լայն էր Ս. Հախումյանի հրապարակախոսական, լրագրողական, մանկավարժական գործունեությունը: Նա աշխատում էր Թիֆլիսի հայկական դպրոցներում (1884-1896 թթ.), ղեկավարում Թիֆլիսի հայկական թատերախումբը, իսկ 1897-1898 թթ. Բաքվի հայկական թատրոնի ռեժիսորն էր, 1908 թ. խմբագրում էր «Նոր դպրոց», 1903 թ.՝ «Դաստիարակ» մանկավարժական ամսագրերը, իսկ 1916 թ.՝ «Պայքար», «Փայլակ» քաղաքական-հասարակական ու աշակերտական

[11] Լումա, 1905, N 4:

[12] Մշակ, 1881, դեկտեմբեր, N 42:

խմորատիպ թերթերը: «Լումա» ամսագիրը, բնութագրելով նրա 46 տարվա (1872-1918 թթ.) կյանքի ուղին, գրում է. «Ս. Հախումյանի արժանիքը ոչ թե այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող, հրապարակախոս, հմուտ հրատարակիչ և մանկավարժ, այլև նա տաղանդավոր գրականագետ է, նրա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգով, անօրինակ և անձնվեր սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականությունը, որովհետև նրա գրվածքները դյութիչ են, անկեղծ, սրտից բխած, տպավորիչ, սուր ու ջախջախիչ»[13]:

Ազգանվեր գործիչը մեծ ավանդ է ներդրել հայրենի երկրամասի ժողովրդի պատմության ու բազմադարյան մշակույթի հարցերի լուսաբանման գործում, որի գրավականը նրա թողած հարուստ պատմագիտական, գրականագիտական, հայ դպրոցի պատմությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություններն են:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի մշակույթի ականավոր գործիչներից են Շուշիի թեմական, օրիորդաց դպրոցներում ու ռեալական ուսումնարանում բեղմնավոր գործունեություն ծավալած կրթական գործի կազմակերպիչներ Սեդրակ Մանդինյանը (1880-1881 թթ.), Առաքել Բահաթրյանը (1880-1881 թթ.), հայագիտության բնագավառում՝ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը (1884-1885 թթ.), Մանուկ Աբեղյանը (1886-1887 թթ.), գրականագիտության՝ Արսեն Տերտերյանը (1883-1953 թթ.), Հակոբ Խանլարյանը (1900-1905 թթ.), լեզվաբանության մեջ՝ Հր. Աճառյանը (1902-1903 թթ.), արվեստի բնագավառում՝ Մարգարիտ Ալեքսանյանը (1867-1902 թթ.), Ստեփան Աղաջանյանը (1881-1884 թթ.), պատմագիտության և պարբերական մամուլի բնագավառում՝ Աշոտ Հովհաննիսյանը (1913-1916 թթ.), Երվանդ Լալայանը (1896-1897 թթ.), Վ. Փափազյանը, Ս. Տեր-Մինասյանը, Գր. Խաչիյանը, Ա. Ծատրյանը, Լ. Աթաբեկյանը և շատ ուրիշներ: Նրանք մեծ ճանաչում են ձեռք բերել Արցախի ժողովրդի պատմության ու մշակույթի ամենաբազմազան հարցերի լուսաբանման ասպարեզում և իրենց արժեքավոր հետազոտություններով պատվավոր տեղ նվաճել Արցախի մշակույթի պատմության անդաստանում:

ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ИЗВЕСТНЫХ ДЕЯТЕЛЕЙ КУЛЬТУРЫ АРЦАХА

(1850-1920 гг.)

АРУТЮНЯН М. Г.

Резюме

Просветительская деятельность деятелей культуры Арцаха переживала бурное развитие, начиная со второй половины XIX в. до

[13] Մշակ, 1882, N 84:

второго десятилетия XX в. Культура Арцаха представляет собой неотъемлемую часть многовековой армянской культуры. Просветительской деятельностью занимались видные представители рода Гасан-Джалалянов (в частности, митрополит Багдасар, архиепископ Саркис) и многие другие арцахские деятели, которые основали многочисленные школы, занимаясь воспитанием молодого поколения в духе национальных ценностей. Они являлись основателями многих периодических изданий. Ими было создано много библиотек.